

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

1. Փռուցուած գաւառամասերը Երեւանեան նահանգում

Բնութիւնը երևանեան նահանգում որքան որ առատաձեռն է դաշտային մասերում, նոյնքան ժլատ է լեռնոտ տեղերում և որքան պտղաբեր ցած հարթութիւնների վրայ, նոյնքան դաժան բարձրաւանդակներում: Եւ այժմ նահանգի այն մասերը, որոնք ընկած են լեռնոտ մասերում և բարձրաւանդակների վրայ, ոչ միայն ենթակայ են ժլատ ու անողոր բնութեան զրկանքներին, այլ և մոռացուած ամենքից, թողնուած բախտի կամքին: Ահա թէ ինչու այդ մասերում ժողովուրդը տարեց տարի աղքատանալով հասել է յետին ծայր թշուառութեան և մի կամ երկու միմեանց յաջորդող անբերրի տարիներում ենթարկուելով տնտեսական ծայրայեղ քայքայման, թողնում է երեսի վրայ իր ընտանիքը, ձգում իրան ապրուստ չը հայթայթող վար ու ցանքը և ձեռք առնում պանդխտութեան գաւազանը:

Այսպիսի աննպաստ պայմաններին ենթակայ և բախտի կամքին թողնուած գաւառամասերը այժմ ներկայացնում են երևանեան նահանգում Աբարանը, Դարաչիչակը և Նոր-Բայազէտը: Յուրտ կլիման, երկարատև ձմեռը որքան էլ այդ տեղերի ժողովուրդին ընտելացրած լինեն սակաւապետութեան, բայց յաճախակի տեղի ունեցող ամբողջ ամառուայ ընթացքում սոսկալի երաշտը այնպէս այրում, խանձում է բուսականութիւնը, որ սովը, տնտեսական քայքայումը անխուսափելի է դառնում այդ տեղերում:

Բացի հացահատիկների մշակութիւնից, այդ տեղերում ժողովուրդը պարապում է նաև անասնապահութեամբ: Այդ երկրորդ պարապմունքը նոյնպէս նրան չէ վարձատրում: Թէև այդ բարձրաւանդակներում անասնապահութեան համար ձգուած են ընդարձակ արօտատեղեր և գեղեցիկ լեռնաշղթաներ, բայց երաշտ տարիներում ինչպէս հացաբոյսերը, այնպէս էլ արօտատեղերը աղանձուելով առաջացնում են խոտի, դարմանի

այնպիսի պակասութիւն, որ առանց այն էլ աղքատ ժողովուրդը, կենդանիների ուտեստի թանգութեան սարսափի տակ, ծախում, «գլխից ռազ» է անում իր մի քանի գլուխ ոչխարը, աչքի լոյս լծկան եզը, իր երեխաների «ըռուզը» կթի կովը և մնում է դատարկաձեռն: Եւ ահա անասնապահն էլ դարձեալ ստիպուած է գաղթել դէպի աշխատանքի կենտրոնները—Բագու, Բաթում, Թիֆլիս, և մշակութեամբ մի կտոր հաց հասցնելու երեսի վրայ թողած իր ընտանիքին: Իսկ եթէ մնում է իր երկրում—ընկնում է վաշխառուների ճանկը:

Պէտք է այստեղ յիշել որ այդ լեռնային դաւաճները բոլորովին մոռացուած են և մեր Գիւղատնտեսական (շնկերութիւնից, որ քիչ թէ շատ նպաստում է (փորձական դաշտեր, մասնագէտներ) մեր նահանգի դաշտային մասերի ժողովրդական աշխատանքը գիւղատնտեսական գիտութեան փորձերով աւելի արդիւնաւոր դարձնելու, սակայն բնաւ ուշադրութիւն չի դարձնում լեռնային ժողովրդի նահապետական անօգնական վիճակի վրայ: Մինչդեռ յիշեալ լեռնոտ մասերում կարելի էր, աւելի զարգացնել անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը, կարելի էր ագնուացնել կենդանիների տեսակները, կարելի էր սովորեցնել իւր և պանիր պատրաստելու աւելի ձեռնտու միջոցները, կարելի էր ճանապարհներ ցոյց տալ շուկայ դուրս բերելու այդ բոլոր արդիւնքները, ինչպէս և բուրգը, կաշին: Սարահարթերում աճող կերպով աճում են կանիփ և կտաւահատ, որոնցից կարելի է ստանալ թոկերի համար թել և ամենաընտիր քաթմաներ ու պարուսիներ պատրաստելու համար վուշ, մինչդեռ մեր ժողովուրդը գաղափար անգամ չունենալով դրանց մասին, այդ բոյսերը մշակում է այն չափով, ինչ չափով հորկաւոր է հատիկների գործածութեան և ձէթ ստանալու համար, իսկ հատիկները ստանալուց յետոյ ցողունները համարեա կորչում են աննպատակ:

Այդ տեղերում կարելի էր զարգացնել նաև մեղուաբուծութիւնը, այն ինչ գիւղատնտեսական այդ ճիւղը միանգամայն գոյութիւն չունի այդ լեռնամասերում: Կարելի էր զարգացնել բանջարանոցային բոյսեր, որոնք նոյնպէս անտես են առնուած: Տնայնագործութեան ոչ մի ճիւղ գոյութիւն չունի. կապերտներ, թաղիքներ, չալեր, ջէջիմներ և այլն գործուածքներ պատրաստելը բոլորովին մոռացուել են այդ տեղերում, այն ինչ բաւական էր որ ժողովրդին մատակարարուէր թկը և ցոյց տրուէր գործելու եղանակը, որ զարգանար. այդ տեղերում տնայնագործութիւնը, որ մեր լեռների ժողովուրդը փոխանակ դատարկա-

բանութիւններով տարուայ 6—7 ամիսները սպանելու, պարապէր տնայնագործութեամբ և այլ օգտակար արհեստներով:

Վերջապէս կարելի էր հաստատել գիւղական բանկեր, բաց թողնելով գիւղացուն էժան կրեղիտ, ազատելով նրան վաշխառուների ձանկերից: Մի խօսքով մեծ ասպարէզ կայ մեր մասնագէտ-ինտելիգէնտների, մեր գիւղատնտեսական ընկերութեան առաջ. հարկաւոր է նախաձեռնութիւն, էներգիա...

Այժմ երբ կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը գործի գլուխ անցնելով կազմակերպել է ցուցահանդէսը, թող ուշադրութեան առնի և այս մոռացուած շրջանները, թող յատուկ մասնագէտներ ուղարկէ յիշեալ գաւառամասերը, հիմնէ կաթնատնտեսական և թռչնարանական կայարաններ, տարածէ տնայնագործութիւնը և այլ արհեստներ ու պարապմունքներ և դրանով նա նպաստած կը լինէր այդ մոռացուած գաւառների ազգաբնակչութեան տնտեսական բարօրութեան:

Ա.—ԴՕ

II. Վիճակագրական տեղեկութիւններ Ալեքսանդրօպօլի գաւառի հայ-լուսաւորչականներէ մասին:

Մեր գաւառական կեանքն ընդհանրապէս քիչ է ուսումնասիրուած: Գաւառների մասին մեր գրականութեան մէջ բացարձակ կերպով պակասում են վիճակագրական տեղեկութիւններ:

Վիճակիս յաջորդ Մատթէոս վարդապետը գործակալների միջոցով գիւղական քահանաներին*) տպագրած ցուցակներ էր ուղարկել: Այդ ցուցակների մէջ նրանք պէտք է տեղեկութիւններ գրէին: Յիշեալ ցուցակների մէջ մարդահամարը թեթեւ սխալներ էր պարունակում, որոնց ստուգելու համար մենք անձամբ գնացինք գիւղերը և դատարաններում եղածների հետ ուղղեցինք: Ծիսակատարութիւնների մասը վերաբերում էր վերջին քառամեակին, այն է 97, 98, 99 և 900 թուրի: Սրանց մէջ անճշտութիւններն աչքի էին ընկնում, ուստի լաւ համարեցինք այս մասը նոր մէկից ուսումնասիրել: Հոգ. կառավարութեան արխիւից օգտուելու թույլտուութիւն ստանալով՝ այլ և այլ համեմատութիւնների համար քիչ համարեցինք չորս տարին, վերջրինք տասնամեակը՝ սկսած 91 թուից մինչև 900 թիւը: Ցուցակներում նշանակուած հոգերի քանակութիւնը պակասուոր

*) Եթէ քաղաքներում քահանաների մէջ եղած անհաստատութիւնն անտանելի է, որից և զլխատրապէս ծագում է անբաւականութիւն, վէճ, կռիւ, գիւղերում հօ քահանաների դրութիւնը սոսկալի է արդէն: Գիւղացին յօժարութեամբ չի տալ քահանայի հասոյթը. տարիններով ծիսակատարութիւն է անում մարդը և ոչինչ չի ստանում, ո՛չ պտղի և ո՛չ փող: Հողաբաժինը, որ քահանան օրէնքով պէտք է ստանար, շատ գիւղերում գիւղացիք կոպտութեամբ խլել են նրա ձեռքից: Քահանան եթէ տանը աշխատող ձեռքեր ունի, լաւ, իսկ եթէ ո՛չ, ապրում է լեւտին չքատրութեան մէջ, անմառնջ տանելով իր ծանր խաչը: